Կազմված է 2016 թ. դեկտեմբերի 19-ին
Բաղկացած է 13 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2014 թվականի նոյեմբերի 5-ի
№ 218 Ա/1 հրամանով

Նախարար՝

_____ Հ. Ռոստոմյան

«19» դեկտեմբերի 2016 թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
07.02.2003 թ.

Գրանցման համար՝ 273.210.03418
Վկայականի համար՝ 03Ա059043
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 01507654
24.12.2014 թ. գրանցված կանոնադրության
թիվ 004.3 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«02» 03 2017թ.

_____

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ №1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**(ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 19.12.2016 Թ. № 237-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)**

ԵՐԵՎԱՆ

*Հավելված № 8*
*Հայաստանի Հանրապետության սպորտի և*
*երիտասարդության հարցերի նախարարի*
*2014 թ. նոյեմբերի 5-ի № 218-Ա/1 հրամանի*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# «ԱՏԼԵՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Մարզադպրոց, նախկին անվանումը՝ «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 1 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ուսումնամարզական գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Մարզադպրոցը ստեղծված է համարվում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման: Նրա գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. Մարզադպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Մարզադպրոցը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի № 1636-Ն որոշմամբ «Հանրապետական մասնագիտացված մանկապատանեկան օլիմպիական հերթափոխի մարզադպրոց» ՀՄ (գրանցման համար՝ 273.0057, գրանցման օր՝ 12.02.1997 թ., վկայականի համար՝ Բ002943) վերակազմավորման միջոցով, վերակազմակերպման արդյունքում և հադիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համաձայն: Մարզադպրոցը հանդիսանում է «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» (գրանցման համար՝ 273.210.03419, գրանցման օր՝ 07.02.2003 թ., գրանցման վկայականը՝ 03Ա059044) պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում):

4. Մարզադպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Մարզադպրոցը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային

իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Մարզադպրոցը գործում է լիազորված պետական մարմնի՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) անմիջական ենթակայությամբ:

6. Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

7. Մարզադպրոցում չի թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

8. Մարզադպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ, ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Մարզադպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է համարվել միայն հիմնադրի որոշմամբ:

10. Մարզադպրոցի անվանումն է.

հայերեն լրիվ՝ «Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «Ատլետիկայի ՕՄՊՄԴ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ **"Олимпийская детско-юношеская спортивная школа атлетики" государственная некоммерческая организация**

ռուսերեն կրճատ՝ **"ОДЮСША" ГНКО**

անգլերեն լրիվ՝ **"Olympic Youth Sports School of Athletics" State Non Commercial Organization**

անգլերեն կրճատ՝ **"OYSSA" SNCO**

11. Մարզադպրոցի գտնվելու վայրն է ք. Երևան, Զավարյան փ., շ. 1, բն. 1:»:

## II. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Մարզադպրոցի գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանում և ամրապնդում, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը.

2) ընտրած մարզաձևում պարապողների մարզական ընդունակությունների կատարելագործումը.

3) հատուկ մարզական պատրաստության միջոցով Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստումը և համալրումը.

4) սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելը, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը.

5) հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատումը ֆիզկոյտուրային-արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման օժանդակումը:

13. Մարզադպրոցի գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է:

14. Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, մարզական կատարելագործման և մարզական բարձրագույն վարպետության խմբեր:

15. Մարզադպրոցի աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում՝

1) պարապողների խմբի կայունության պահպանումը.

2) վարպետ թիմերի և ազգային հավաքական թիմերի, օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջների համալրումը.

3) օլիմպիական, աշխարհի և Եվրոպայի խաղերի մասնակից մարզիկների պատրաստումը:

16. Հանրապետության հավաքական թիմերը պարբերաբար համալրելու, օլիմպիական, աշխարհի և Եվրոպայի խաղերի մասնակից պատրաստելու դեպքում Մարզադպրոցը, նրա առանձին բաժանմունքները կարող են ստանալ օլիմպիական կազմակերպության կարգավիճակ: Հերթական օլիմպիական խաղերի ավարտից հետո, համապատասխան ցուցանիշների համաձայն, լիազորված պետական կառավարման մարմնի կողմից շնորհվում կամ վերահաստատվում է Մարզադպրոցի կարգավիճակը:

17. Մարզադպրոցի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին: Մարզադպրոցը գործում է ամբողջ տարվա ընթացքում՝ ապահովելով 51-52 շաբաթվա համար նախատեսված շուրջամյա մարզումներ, որոնցից 5-6 շաբաթը (համապատասխան միջոցներ ունենալու դեպքում)՝ ամառային և ձմեռային սպորտային և առողջարարական ճամբարային պայմաններում: Մարզադպրոցի համակազմի (կոնտինգենտ) և ուսումնական խմբերի հրամանագրումը կատարվում է ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը:

18. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կառուցվում է առանձին մարզաձևերի ուսումնական ծրագրերի պահանջների հիման վրա, իսկ ուսումնական խմբերում ընդգրկվածների քանակը, ուսումնական աշխատանքների կանոնակարգը հաստատվում են լիազորված պետական մարմնի՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով:

19. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են խմբակային ուսումնամարզական և տեսական պարապմունքներ, աշխատանքն անհատական պլանով, բժշկավերականգնողական միջոցառումները, մասնակցությունը մրցումներին, հավաքներին և մարզական-առողջարարական ճամբարներին:

20. Մարզադպրոցը կազմակերպում է հետևյալ ուսումնամարզական հավաքները՝

1) հանրապետական մրցումների նախապատրաստական հավաքներ.

2) միջազգային մրցումների նախապատրաստական հավաքներ.

3) ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականության հավաքներ:

21. Մարզադպրոցի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

22. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով միջազգային կապեր հաստատելու արտերկրյա մարզական կազմակերպությունների հետ, կազմակերպելու մարզական պատվիրակությունների փոխայցելություններ, համատեղ միջոցառումներ:

23. Մարզադպրոցը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) լրացուցիչ մանկավարժական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացում, սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

2) համակարգչային ծրագրերի ուսուցման կազմակերպում.

3) ճամբարների կազմակերպում:

## III. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Մարզադպրոցի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

25. Մարզադպրոցի հիմնադիրն ունի Մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

26. Լիազորված պետական մարմինն իրականացնում է Մարզադպրոցի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

27. Մարզադպրոցի կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի երկրորդ կետի «գ» «դ» «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 17-ի № 1277-Ն որոշման և Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի:

28. Մարզադպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Մարզադպրոցի հիմնադրումը.

2) Մարզադպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) Մարզադպրոցի օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) Մարզադպրոցի վերակազմակերպումը և լուծարումը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

29. Լիազորված պետական մարմինն իրականացնում է Մարզադպրոցի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

30. Լիազորված պետական մարմինը՝

1) Մարզադպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Մարզադպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է Մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

7) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

8) հաստատում է Մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) հաստատում է Մարզադպրոցի կառուցվածքը և աշխատողների թիվը:

31. Մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (տնօրենը), որը նշանակվում և ազատվում է լիազորված պետական մարմնի կողմից:

Մարզադպրոցի տնօրենը ղեկավարում է Մարզադպրոցի գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքները, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումները, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ թերի կատարելու համար:

32. Մարզադպրոցի գործադիր մարմինը (տնօրենը)՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Մարզադպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Մարզադպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է Մարզադպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է Մարզադպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է Մարզադպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ա. վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

բ. ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

գ. կազմում է Մարզադպրոցի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.

դ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Մարզադպրոցի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ.

10) հաստատում է Մարզադպրոցի մասնաճյուղերի կանոնադրությունը:

33. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Մարզադպրոցին պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

34. Տնօրենը պարտավոր չէ կատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի, Խորհրդի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

35. Մարզադպրոցի տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմինը: Պայմանագրով սահմանվում են Մարզադպրոցի տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին:

36. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված մարմնի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

37. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է այդ մասին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

6) իր գործառույթներն իրականացնելիս Մարզադպրոցին կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

7) դատարանի օրինական ուժի մեջ մտած օրենքի վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

8) զրկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

9) նրա ղեկավարած Մարզադպրոցը դատական կարգով ճանաչվել է սնանկ, կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտականություն.

10) Մարզադպրոցի կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները սահմանված ժամկետից հետո իր մեղքով հաշվետու ժամանակաշրջանում չեն վճարվել.

11) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

38. Մարզադպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

39. Խորհուրդը կազմված է 5 անդամից, այդ թվում՝ Մարզադպրոցի կազմից 2 անդամ, լիազոր մարմնի ներկայացուցիչներից՝ 3 անդամ:

40. Մարզադպրոցի կողմից Խորհրդի անդամներ կարող են ընտրվել Մարզադպրոցի աշխատավորական կոլեկտիվի անդամները, որոնց ընտրում են աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովները (բացառությամբ հաշվապահի և տնօրենի, որոնք օրենսդրությամբ համարվում են հաշվետու անձինք):

41. Նախարարությունը Մարզադպրոցի Խորհրդի անդամ է առաջադրում ֆիզկական կուլտուրայի և սպորտի բնագավառի աշխատողներից և մասնագետներից:

42. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Նախարարը՝ ներկայացված թեկնածուների ցանկի հիման վրա:

43. Տնօրենը չի կարող լինել Խորհրդի անդամ, նա Խորհրդի նիստերին կարող է մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

44. Խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար:

45. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

1) իր դիմումի համաձայն.

2) Խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ կամ մահվան պատճառով.

3) Խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող մարմնի առաջարկությամբ.

4) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով.

5) որպես պարապող առաջադրվելու դեպքում՝ պարապողի կարգավիճակը կորցնելու հետևանքով:

46. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են Նախարարի հրամանով:

47. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքերում դրանք համալրվում են սույն կանոնադրության 43-47 կետերի պահանջներին համապատասխան:

48. Խորհուրդը՝

1) Նախարարություն է ներկայացնում առաջարկություններ՝ Մարզադպրոցի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ՝ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝

Մարզադպրոցի գործունեության բնագավառին, առարկային և նպատակներին համապատասխան.

2) իրականացնում է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն.

3) հիմնադրի սահմանած կարգով որոշում է Մարզադպրոցի շահույթի տնօրինման ուղղությունները.

4) հաստատում է Խորհրդի աշխատակարգը.

5) քննարկում և հաստատում է տնօրենի հաշվետվությունները.

6) հաստատում է Մարզադպրոցի ներքին գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան սահմանված չէ.

7) հաստատում է Մարզադպրոցի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան սահմանված չէ.

8) քննարկում է Մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը.

9) քննարկում է Մարզադպրոցի զարգացման ծրագրերը.

10) հաստատում է Մարզադպրոցի գործունեության տարեկան պլանը և դրա կատարման ժամկետները.

11) քննարկում և Նախարարի հաստատմանն է ներկայացնում Մարզադպրոցի կանոնադրության նախագիծը, դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները.

12) քննարկում է Մարզադպրոցի ուսումնական պլանները.

13) ընդունում է որոշում Մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին.

14) քննում և հաստատում է Մարզադպրոցի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը,

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

49. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

50. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Նախարարության կամ տնօրենի կամ Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:

51. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե նիստին ներկա է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

52. Խորհրդի արձանագրություններն ու որոշումները ստորագրում են Խորհրդի նախագահը և քարտուղարը:

53. Խորհրդի նախագահը՝

1) նախագահում է Խորհրդի նիստերը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ Խորհրդի անդամներից մեկը.

2) իր նախաձեռնությամբ և (կամ) ստացված առաջարկությունների հիման վրա սահմանում է Խորհրդի նիստերի օրակարգերը, կազմակերպում Խորհրդի գործունեությունը:

54. Խորհրդի քարտուղարն արձանագրում է Խորհրդի նիստերը, կազմակերպում Խորհրդի գործավարությունը:

55. Խորհուրդն իր արտահերթ նիստերի օրակարգի և ժամկետի մասին առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնում է իր անդամներին:

56. Հիմնադրի որոշմամբ Խորհրդին կարող են վերապահվել տնօրենի նշանակումը, նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հաստատումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության կարգի ու պայմանների սահմանումը:

57. Ուսումնական գծով փոխտնօրենը (այսուհետ՝ ուսմասվար) աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատվում տնօրենի կողմից և պետք է ունենա ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի բարձրագույն կրթություն և մարզչական աշխատանքի առնվազն 5 տարվա աշխատանքի փորձառություն: Ուսմասվարը պատասխանատվություն է կրում ուսումնամարզական գործընթացի կազմակերպման, ուսումնական փաստաթղթերի վարման, ուսումնական խմբերի ճիշտ համալրման (կոմպլեկտավորում), մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման համար և այլն: Ուսմասվարն իրականացնում է վերահսկողություն ուսումնամարզական գործընթացի անցկացման, պարապողների կողմից ծրագրային նյութի յուրացման նկատմամբ:

58. Ավագ հրահանգիչ-մեթոդիստը և հրահանգիչ-մեթոդիստը պետք է ունենան բարձրագույն մասնագիտական կրթություն, առնվազն երեք տարվա մարզչական աշխատանքի փորձառություն:

59. Ավագ հրահանգիչ-մեթոդիստը և հրահանգիչ-մեթոդիստը պատասխանատվություն են կրում մարզական գործընթացի կազմակերպմանը, մարզիչ-մանկավարժների աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացմանը վերաբերող մեթոդական աշխատանքների կազմակերպման համար: Նրանք պատասխանատվություն են կրում նաև դաստիարակչական աշխատանքների և մարզիչ-մանկավարժներին մասնագիտական գրականությանը, մեթոդական հանձնարարականներին հաղորդակից դարձնելու համար:

60. Տնօրենին, ուսմասվարին, ավագ հրահանգիչ-մեթոդիստին և հրահանգիչ-մեթոդիստին թույլատրվում է նույն դպրոցում հիմնական աշխատանքի ժամերի ընթացքում վարել մարզչական աշխատանք 0.5 դրույքի չափով: Վճարումն իրականացվում է մարզիչ-մանկավարժի դրույքի հաշվարկով:

61. Մարզադպրոցի մարզչական-մանկավարժական կազմը, որպես կանոն, համալրվում է ֆիզկուլտուրային կրթություն ունեցող մասնագետներից: Մարզիչ-մանկավարժն իրականացնում է՝

1) սպորտային վարպետության հետագա բարձրացման համար պարապողների միջից հեռանկարային երեխաների ընտրությունը.

2) ուսումնամարզական գործընթացի կազմակերպումը՝ ուսումնական ծրագրի համաձայն.

3) պարապմունքների հաճախումների հաշվառումը:

62. Մարզիչ-մանկավարժը պատասխանատվություն է կրում մարզական գործընթացի անվտանգության ապահովման համար, հսկողություն է սահմանում պարապողների նկատմամբ՝ տարատեսակ խթանիչներ չընդունելու համար:

63. Կազմակերպության տնօրենի հրամանով նշանակվում են բաժանմունքի ավագ մարզիչ-մանկավարժներ, եթե տվյալ բաժանմունքն ունի առնվազն երեք մարզիչ-մանկավարժի հաստիք:

64. Ավագ մարզիչ-մանկավարժը, բացի մարզիչ-մանկավարժի պարտականու-թյուններից, պատասխանատվություն է կրում նաև բաժանմունքի մարզական գործընթացի ծրագրման

(պլանավորման), աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրման, ծրագրային պահանջների վերահսկման, բաժանմունքի միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար:

65. Առաջադրված մանկավարժական խնդիրները լուծելու համար Մարզադպրոցում ստեղծվում է մարզչական խորհուրդ: Խորհուրդը ղեկավարում է ավագ մարզիչ-մանկավարժը:

66. Մարզադպրոցի պարապողների բժշկական սպասարկումն իրականացվում է բժշկական անձնակազմի միջոցով:

## IV. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

67. Մարզադպրոցի սեփականությունը ձևավորվում է Մարզադպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի և լիազոր մարմնի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Մարզադպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

68. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

69. Հիմնադիրը սեփականության իրավունքով Մարզադպրոցին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Մարզադպրոցի լուծարումից հետո մնացած գույքի:

70. Մարզադպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է Մարզադպրոցը:

71. Մարզադպրոցի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

72. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից Մարզադպրոցին ամրացված գույքը:

73. Մարզադպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Մարզադպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ Մարզադպրոցի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները Մարզադպրոցի սեփականությունն են: Մարզադպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

74. Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

75. Մարզադպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ հետևյալ աղբյուրներից՝

1) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և սույն կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

76. Մարզադպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

77. Մարզադպրոցի շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական վիճակի բարելավմանը:

78. Մարզադպրոցի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

## V. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

79. Մարզադպրոցի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները, որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) մանկավարժական աշխատողները:

80. Երեխաների ընդունելության ժամանակ Մարզադպրոցի տնօրինությունը պարտավոր ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել Մարզադպրոց կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մանկապատանեկա Մարզադպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականություններ սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու Մարզադպրոցի ներքի կարգապահական կանոններով:

81. Սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքներն պարտականությունները կարգավորվում են Մարզադպրոցի կանոնադրությամբ և այլ իրավակա ակտերով:

82. Մարզադպրոցի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է սույ կանոնադրությամբ:

83. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըս մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

84. Մարզադպրոցի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու Մարզադպրոց կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական մանկավարժական բնույթի աշխատանքներ:

85. Մարզադպրոցի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

86. Մարզադպրոցի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահով կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

87. Մարզադպրոցում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնությ գործադրումը:

88. Սանը պարտավոր է՝

1) բարեխղճորեն սովորել.

2) խնամքով վերաբերվել Կազմակերպության գույքին.
3) հարգել Մարզադպրոցի սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը.
4) պահպանել Մարզադպրոցի ներքին կարգապահական կանոնները:

89. Մարզադպրոցի երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

## VI. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

90. Մարզադպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

91. Մարզադպրոցը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Մարզադպրոցը կարող է վերակազմակերպվել 100 % պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

92. Մարզադպրոցի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

93. Մարզադպրոցը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Մարզադպրոցը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

94. Մարզադպրոցի լուծարման դեպքում Մարզադպրոցի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Կազմված է 26.12. 2016թ. և բաղկացած է 6 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարի
26.12. 2016 թ. № 255-Ա/1 հրամանով

Նախարար՝
_____ Հ. Ռոստոմյան

Սույն փաստաթղթի համաձայն պետական
գրանցումը կատարված է Հայաստանի
Հանրապետության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
«02» 03 2017թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝
_____

**ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ № 2 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ № 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ

Ք.Երևան

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 1 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն են փոխանցվում.

1) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում 26.12.2016 թ. դրությամբ ընդգրկված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտավորությունները (ներառյալ կրեդիտորական և դեբիտորական պարտքերը)՝ հիմնական հաշվեկշռային ցուցանիշներով, համաձայն № 2 հավելվածի,

2. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 26.12.2016 թ.դրությամբ այլ ակտիվներ և պասիվներ չունի:

3. «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է հանդիսանում «Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 1 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 1 մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝

կազմակերպության տնօրեն՝

_____ Վ. Ջավախյան

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան № 2 մարզադպրոց» ևպետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝

կազմակերպության տնօրեն՝

_____ Ս. Մարտիրոսյան

Կազմված է 06.10.2020 թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարի

2020 թվականի հոկտեմբերի 6-ի

№ 1368-Ա/2 հրամանով

Նախարար

Ա. Հարությունյան

«6» հոկտեմբերի 2020 թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՔ - ՄԱՐԱՇ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
07.02.2003 թ.
Գրանցման համար՝ 273.210.03418
Վկայականի համար՝ 03Ա059043
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 01507654
24 12 2014թ գրանցված կանոնադրության
Թիվ _____ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

«19» 10 2020 թ.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# «ԱՏԼԵՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
## (Փոփոխություն)

1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2014 թվականի նոյեմբերի 5-ի №218-Ա/1 հրամանով հաստատված «Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն).

1) 3-րդ, 5-րդ, 18-րդ և 27-րդ կետերում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով.

2) կանոնադրության 73-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«73.Մարզադպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Մարզադպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Պետական գույքի վարձակալության տրամադրման, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3) կանոնադրության 73-րդ կետից հետո լրացնել նոր 73.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ. «73.1 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մարզադպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես մարզադպրոցին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան մարզադպրոցին փոխանցելու համար:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից 07.02.2003 թվական, գրանցման թիվ 273.210.03418, վկայական 03Ա059043) անբաժանելի մասը: